ԿԱՐԳ ՀԻՎԱՆԴԱՑ

«Կարգ հիվանդաց»-ը Հայ Եկեղեցու յոթ խորհուրդներից է եւ հաստատված է առաքելական շրջանում՝ ըստ այն հրահանգող առաքյալի պատգամի. «Հիվա՞նդ է ձեզանից մեկը, թող կանչի եկեղեցու երեցներին, եւ նրանք նրա վրա թող աղոթք անեն, թող յուղով օծեն նրան Տիրոջ անունով» (Հակ. Ե 14): Ինչպես տեսնում ենք, այն հաստատվել է ի բժշկություն հիվանդությունների եւ սխալ է այն դիտել իբրեւ մահվան նախապատրաստություն: Բարեպաշտ հայ ժողովուրդը եկեղեցում օրհնված յուղ է տներում միշտ ունեցել, որն օգտագործվել է հիվանդների համար: ԺԴ դարից սկսած հիվանդներին օրհնած ձեթով օծելու այս խորհուրդն սկսել է դադարել: Այսօր պահպանված եւ կատարվող բժշկության կարգը հետեւյալն է. հոգեւորականը այցելում է ծխի հիվանդ անդամին, աղոթք եւ բժշկության ավետարան կարդում, իր աջը դնում նրա վրա, ապա նաեւ հաղորդություն տալիս: Այսպիսով հիվանդի թե՞ հոգին եւ թե՞ մարմինըբժշկություն են գտնում:

Իսկ յուղով օծման կարգը վերահիմաստավորվել ու փոխադրվել է դրոշմի խորհրդի մեջ, որ կատարվում է մյուռոնով: Ճակատից, սրտից ու թիկունքից զատ, որ բուն դրոշմի խորհուրդն է, մյուռոնով խաչադրոշմ է արվումմկրտվողի աչքերին, ականջներին, հոտոտելիքին, բերանին, ափերի մեջ ու ծնկներին:

Յուղով օծելու մի ուրիշ դրսեւորում է «Վերջին օծումը» անվանված կարգը, որ մեր եկեղեցին կատարում է միայն ննջեցյալ հոգեւորականների համար. Հուղարկավորելուց անմիջապես առաջ մարմինն օծվում է մյուռոնով: